ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1203-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 15.09.2026թ. թիվ Ե/3/2744-26 գրությունը՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ինքնակամ շինություններ հայտնաբերելու վերաբերյալ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջների պահպանումը պարզելու նպատակով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում «Քուայթ Արեա» ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Արմենի Նաղդալյանի կողմից թվով 7 հատ կոյուղահորերի ինքնակամ կառուցելու փաստի առթիվ հարուցել վարչական վարույթ և իրականացնել քննարկում 2026 թվականի սեպտեմբերի 25-ին ժամը 12:00-ին ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 125 հասցեում, Ճամբարակի համայնքապետարանի շենքում:
2. Հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել «Քուայթ Արեա» ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Արմենի Նաղդալյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 16
ք. Ճամբարակ